Ինչու՞ է սելեստիալ արքայությանը ձգտելը արժանի մեր լավագույն ջանքերին

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Պատկերացրեք, որ ձեր ընկերներից մեկի կարծիքով սելեստիալ արքայությանը ձգտելը արժանի չէ այն բոլոր ջանքերին, որ անհրաժեշտ են դրա համար:

Պատրաստեք կարճ պատասխան, որով կարող եք կիսվել ձեր ընկերոջ հետ, և որը կարող է օգնել նրան հասկանալ, որ սելեստիալ արքայությունը արժանի է ցանկացած ջանքի, որն անհրաժեշտ է ավետարանով ապրելու համար: Կարող եք օգտագործել հետևյալ նյութերից մի քանիսը և պատասխանել հետևյալ հարցերին, որոնք կօգնեն ձեզ պատրաստել ձեր պատասխանը:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Լ. Թոմ Փերին (1922–2015) ուսուցանել է.

Հավատում եմ, որ եթե կարողանայինք հավերժական կյանքի պարզ և ճշմարիտ պատկերը ստեղծել մեր մտքերում, կսկսեինք այլ կերպ պահել մեզ: Մենք կարիք չէինք ունենա ուրիշների դրդմամբ կատարել «դիմակայիր մինչև վերջ» արտահայտության հետ առնչվող շատ քայլերը, ինչպիսիք են՝ [սպասավորել], հաճախել մեր ժողովներին, գնալ տաճար, ապրել բարոյական կյանքով, աղոթել և կարդալ սուրբ գրություններ: Մենք կցանկանայինք կատարել այս բոլոր քայլերը և ավելին, որովհետև կգիտակցեինք, որ դրանք մեզ կնախապատրաստեն գնալ այնտեղ, ուր մենք ցանկանում ենք գնալ (Լ. Թոմ Փերի, «Հիսուս Քրիստոսի Ավետարանը», *Ensign* կամ *Լիահոնա*,, մայիս 2008, 44):

Հայտնություն 7.13–17

Հայտնություն 21.22–27

Մոսիա 2.41

Վարդապետություն և Ուխտեր 76.51–52, 59–60, 69–70

Վարդապետություն և Ուխտեր 130.2

Հետևյալ հարցերից մի քանիսը կարող են օգնել ուղղորդել ձեր մտքերը ձեր պատասխանի մասին մտորելիս.

- Ի՞նչն է ձեզ ոգևորում, երբ մտածում եք սելեստիալ արքայությունում ապրելու մասին:
- Ի՞նչ եք սովորել Փրկչի մասին, որը մղում է ձեզ հետևել Նրան և ձգտել ստանալ սելեստիալ արքայությունը:
- Ի՞նչ փորձառություններ եք ունեցել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ, որ մեծացնում են Նրանց հետ կրկին ապրելու ձեր ցանկությունը:
- Ինչպե՞ս է Նրանց սերն օգնել ձեզ զգալ, որ սելեստիալ արքայությունը հասանելի է:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Why Striving for the Celestial Kingdom Is Worth Our Best Efforts*-ի թարգմանությունը: Armenian. PD60012661 201. Printed in the USA.